

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացու-
թյունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արծվիկ Մինասյանի,
Կարեն Վարդանյանի, Արա Նռանյանի, Ստյոպա Սաֆարյանի, Վարդան Բոստանջյանի, Արմեն
Մարտիրոսյանի, Ռազաննա Առաքելյանի և Հակոբ Հակոբյանի՝ օրենսդրական նախաձեռնության
կարգով ներկայացրած «Սննդամթերքի անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության
օրենքում լրացումներ կատարելու մասին և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ
Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու
մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

1. «Սննդամթերքի անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ
անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 69-րդ գլխի 2-
րդ պարագրաֆով և «Ապրանքային նշանների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով
սահմանվում են ապրանքային նշանի հետ կապված իրավունքներ և ոչ թե պարտականություններ:
Մինչդեռ՝ ներկայացված նախագծով սննդամթերքի անվտանգության բնագավառի հա-
րաբերություններին մասնակից սուբյեկտների համար, որպես պարտադիր պահանջ, սահմանվել է,
որ հանրապետությունում իրացվող սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային

հավելումների մակնշումը հայերենով պետք է ներառի նաև գրանցված ապրանքային նշանի գրանցման համարը:

Համաձայն «Մանրամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ Հայաստանի Հանրապետությունում իրացվող սննդամթերքը, սննդամթերքի հետ շփվող նյութերը և սննդային հավելումները պետք է բավարարեն սննդամթերքի անվտանգության ապահովման ոլորտի տեխնիկական կարգերով և (կամ) նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի «գե ենթակետի համաձայն 8-րդ հոդվածի 3-րդ մասը համարվել է ուժը կորցրած, իսկ 8-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների վերաբերյալ հայերեն տեղեկատվության մակնշման ձևերին ու բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1838-Ն որոշմամբ:

Ներկայացված նախագծում նշված՝ Հայաստանի Հանրապետությունում իրացվող սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների իրացման համար գրանցված ապրանքային նշանի պարտադրումը և դրանց փաթեթավորման վրա դրա գրանցման համարի առկայության պահանջը սննդամթերքի անվտանգության ապահովման երաշխիք լինել չի կարող:

2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1178-րդ հոդվածով կարգավորվում է ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի խախտման դեպքում պատասխանատվության ենթարկելու հարցը: Մասնավորապես, նշված հոդվածի համաձայն՝ ապրանքային նշանն ապօրինի օգտագործող անձը պարտավոր է դադարեցնել խախտումը և ապրանքային նշանի իրավատիրոջը հատուցել պատճառած վնասները, ոչնչացնել ապրանքային նշանի պատրաստված պատկերները, ապրանքի կամ դրա փաթեթավորման վրայից հանել ապօրինի օգտագործվող ապրանքային նշանը կամ դրան շփոթելու աստիճանի նման նշանը: Սահմանված պահանջները կատարելու անհնարինության դեպքում համապատասխան ապրանքը ենթակա է ոչնչացման՝ օրենքով

սահմանված կարգով: Ապրանքային նշանի իրավական պահպանության հարցը կարգավորված է նաև «Ապրանքային նշանների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով:

Ելնելով նշվածից, նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապրանքային նշանի հետ կապված հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և «Ապրանքային նշանների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված նախագծերի փաթեթի ընդունումը կարիք ունի լրացուցիչ հիմնավորման:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար Գերասիմ Ալավերդյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-1025-16.11.2010-SՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Մանդամթերքի անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Մանդամթերքի անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի (2006 թվականի նոյեմբերի 27, ՀՕ-193-Ն) 8-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր՝ «Ժգե ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ժգ) Հայաստանի Հանրապետությունում գրանցված ապրանքային նշանի գրանցման համարը.ե

Հոդված 2. Հոդված 8-ում ավելացնել նոր՝ 8.1. մաս հետևյալ բովանդակությամբ.

«8.1. Հայաստանի Հանրապետությունում իրացվող սննդամթերքը, սննդամթերքի հետ շփվող նյութերը եւ սննդային հավելումները, որոնք ունեն տարա եւ փաթեթավորում, պետք է իրացվեն միայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված ապրանքային նշաններով:ե

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

Նախագիծ
Պ-1025¹-16.11.2010-SՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության
օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (6 դեկտեմբերի 1985թ.) 158-րդ հոդվածը լրացնել նոր՝ քսանութերորդ եւ քսանիններորդ մասերով հետևյալ բովանդակությամբ.

«Մանդամթերքի անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սննդամթերքը, սննդամթերքի հետ շփվող նյութերը եւ սննդային հավելումները Հայաստանի Հանրապետությունում չգրանցված ապրանքային նշաններով վաճառելը (իրացնելը)՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկից մինչև երեք հարյուրապատիկի չափով:

«Մանդամթերքի անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի եւ սննդային հավելումների փաթեթավորումների վրա արտադրողի եւ/կամ ներմուծողի կողմից ապրանքային նշանի գրանցման կեղծ համար գետեղելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

Հոդված 2. Օրենսգրքի 238² հոդվածում «եւ քսանհինգերորդե բառերը փոխարինել «քսանհինգերորդ, քսանութերորդ եւ քսանիններորդե բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՆՆԴԱՍԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկվող օրենքների նախագծերի նպատակն է պաշտպանել մարդու կյանքն ու առողջությունը, բարձրացնել արտադրանքի կամ ծառայությունների նկատմամբ սպառողների վստահությունը, կանխել թյուրիմացության մեջ նրանց գցող գործոնները, պաշտպանել արտադրողների եւ ներմուծողների իրավունքները, տնտեսվարող սուբյեկտների համար ստեղծել արդարացի մրցակցային պայմաններ: Նախագիծը կնպաստի որպեսզի շուկայում տնտեսվարողները չնմանակեն եւ/կամ չկեղծեն միմյանց արտադրանքները, ինչպես նաեւ կնպաստի հասարակությունում մտավոր սեփականության նկատմամբ հարգանքի մշակույթի ձեւավորմանը:

Օրենքի նախագծով սահմանված մեխանիզմների պրակտիկ կիրառումը ապահովելու նպատակով միաժամանակ առաջարկվել է փոփոխություններ եւ լրացումներ կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները նպատակ ունեն վարչական տուգանքներ կիրառելու մեխանիզմներով պաշտպանել ինչպես սպառողների իրավունքները, այնպես էլ ստեղծել տնտեսվարող սուբյեկտների համար արդարացի մրցակցային պայմաններ՝ զերծ պահելով միմյանց ապրանքները կեղծելու կամ նմանակելու հնարավորությունից:

Օրենքների նախագծերի ուժի մեջ մտնելու ժամկետը (01.01.2012թ.) տնտեսվարողներին հնարավորություն է տալիս զերծ մնալ նյութական կորուստներից, ինչպես նաեւ թույլ է տալիս ունենալով բավականաչափ ժամկետ նախապատրաստվելու օրենքի կիրառությանը՝ դիմելու եւ գրանցելու իրենց ապրանքային նշանները (գործընթացի առավելագույն ժամկետը ութ ամիս է) եւ փոխելու ապրանքների փաթեթավորումները: